ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 150 - Ա
19 սեպտեմբերի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ կետերով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N 1064-Ն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի N 108 – Ա որոշումը

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով հաստատված տեղեկատվության փոխանակման կարգից և ցանկից բխող գործառույթների կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ